ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 10, 1960 Общественные науки

Վ. Ա. Քոսյան

ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Բառակապակցությունը, որպես շարահյուսական առանձին կատեգորիա, ժամանակակից հայերենի քերականության մեջ համարյա չի ուսումնասիրված: Մ. Աբեղյանը իր «Աշխարհաբարի շարահյուսություն» գրքում մասամբ շոշափել է բառակապակցությունների մի շարք տեսակների հարցը, սակայն ոչ միայն չտերմինավորելով, այլև քերականորեն չարժևքավորելով շարահյուսական այդ կատեգորիան ժամանակակից հայերենի քերականական սիստեմում:

Ինչ պետք է հասկանալ բառակապակցություն ասելով:

Բառակապակցությունը երկու կամ ավելի լիիմաստ բառերի քերականական այնպիսի կապակցություն է, որն արտահայտում է մի միասնական, բայց անդամազատ հասկացություն, իմաստ:

Բառակապակցությունը չի կարելի շփոթել նախադասության հետ, քանի որ նախադասությամբ դրսևորվում է ավարտված միտք, իսկ բառակապակցությունը սոսկ հասկացություն է արտահայտում: Բառակապակցությունը միայն նախադասության միջոցով և նախադասության մեջ է հանդես գալիս որպես խոսքի հաղորդակցման միջոցների բաղադրիչ: Բառակապակցությունը նախադասությունից դուրս գոյություն ունի սոսկ որպես լեզվի անվանողական (նոմինատիվ) միջոց: Եթե բառերը լեզվի շինանյութն են պարզագույն ձևով, ապա բառակապակցությունները այդ պարզագույն միավորներից ցեմենտված ամբողջություններ են, որոնցով կառուցվում է լեզվի շենքը՝ դրսևորվում են մարդկային մտքերը:

Բառակապակցությունը նախադասություն չէ, նրան հատուկ չեն շարահյուսական այն կատեգորիաները (դեմքի, թվի, ժամանակի), որոնք պայմանավորում են խոսքի մեջ հաղորդվող մտքի հարաբերական ավարտվածությունը:

Սակայն բառակապակցությունները շարահյուսական կոնկրետ իրողություն են, որոնք, պատմականորեն ձևավորվելով, լեզվի զարգացման յուրաքանչյուր էտապում փոփոխվում են: Պատմական ամեն մի փուլում գործում են բառակապակցությունների յուրահատուկ ձևեր, որոնցով կազմվում են նախադասությունները[1]:

Մյուս կողմից, բառերի կապակցության կանոնները, տարբեր բառակապակցությունների կազմության օրենքները պայմանավորում են ամեն մի լեզվի ազգային յուրահատկությունը:

Այս իմաստով էլ հնարավոր չէ իմանալ որևէ լեզու, առանց հանգամանորեն ուսումնասիրելու այդ լեզվի բառերի կապակցության օրինաչափությունները: Այս է պատճառը, որ միայն բառարանով և ձևաբանությամբ դեռևս լեզուն սովորած չեն համարում: Նույնիսկ նույն լեզվով խոսող ոչ բոլոր անհատներն են կարողանում ճիշտ շարադրել իրենց մտքերը, այլ նա, ով լավ գիտե տվյալ լեզվի բառակապակցությունների օրենքները:

[1] Տես „Грамматика русского языка", II, часть I, стр. 1954, 10—22.

Ժամանակակից հայերենի բառակապակցությունների գիտական բազմակողմանի ուսումնասիրությունը խիստ անհրաժեշտ է ոչ միայն ակադեմիական քերականության ստեղծման, այլև շտապ լուծում պահանջող առօրյա բազմաթիվ հարցերին պատասխան տալու նպատակով։ Հայանի է, որ մեզնում վերջերս ձեռնարկված են էլեկտրոնային հաշվիչ մեքենայով թարգմանություն կատարելու աշխատանքներ։ Հայերենից այլ լեզվի և ընդհակառակն թարգմանություն հնարավոր չէ, եթե մանրամասն մշակված չլինի ժամանակակից հայերենի ոչ միայն ձևաբանությունը, բառագիտությունը, այլև առաջին հերթին՝ բառակապակցությունների ուսմունքը։

Մեր ուսումնասիրությունն առայժմ ընդգրկում է թվականի բառակապակցությունները։ Այս ընտրությունը պատահական չէ։ Ինչպես վերը նշվեց, Մ. Աբեղյանը, հետագայում նաև Վ. Առաքելյանը, մասամբ անդրադարձել են բառակապակցությունների որոշ տեսակներին (բայական և անվանական), մինչդեռ թվականի բառակապակցությունները չեն ուսումնասիրվել բոլորովին։

Մյուս կողմից, առօրյա դասավանդման պրակտիկայում անընդհատ ծագում են բազմաթիվ դժվարություններ՝ կապված թվականի բառակապակցությունների, այդ կապակցությունների և նախադասության անդամների փոխհարաբերության հարցերի հետ։

Սակայն, սկզբից ևեթ պետք է նշել, որ բառակապակցություն և նախադասության անդամ հասկացությունները ոչ բացառում և ոչ էլ փոխարինում են իրար։ Այդ նշանակում է, որ բառակապակցությունը չի վերացնում նախադասության անդամների տրադիցիոն ըմբռնումը։ Մյուս կողմից էլ անհրաժեշտ է նշել, որ բառակապակցությունը և նախադասության անդամը նույն բանը չեն։ Դրանք ունեն առանձին իմաստ և արտահայտում են շարահյուսական տարբեր կատեգորիաներ։ Բառակապակցությունը որոշ դեպքերում կարող է համընկնել նախադասության անդամ հասկացությանը, սակայն մեծ մասամբ տարբերվում է նրանից։ Այսպիսով, դրանք ինչպես իրենց ձևով, այնպես էլ շարահյուսական դերով տարբեր են։

Մեր նպատակն է այստեղ սոսկ նկարագրել թվականի բառակապակցությունները, իսկ այդ կապակցությունների և նախադասության անդամների փոխհարաբերության հարցը ենթակա է առանձին քննության։ Թվականի բառակապակցություններ ասելով ի նկատի ենք ունեցել և՛ անվանական այն բառակապակցությունները, որտեղ թվականը լրացում է, և՛ այլ խոսքի մասերի հետ լրացման դերում հանդես եկող թվականով կապակցությունները, վերջապես այն բառակապակցությունները, որոնցում թվականը լրացյալ է։ Ըստ այսմ էլ սույն աշխատանքը բաղկացած կլինի երեք հատվածից. ա) թվականն անվանական բառակապակցություններում, բ) թվականն այլ խոսքի մասերով կազմված բառակապակցություններում, գ) թվականն իբրև բառակապակցության գլխավոր բառ՝ լրացյալ։

Անվանական բառակապակցություններ՝ թվական լրացումով.— Թվականով բառակապակցությունների մեջ ամենից գործունը այս տեսակն է։ Դրա պատճառն այն է, որ թվականը, լինելով առարկայի թվական հատկանիշ արտահայտող բառ, նախադասության մեջ դառնում է գոյականի լրացում։ Թվականով կազմված անվանական բառակապակցություններն ըստ էության բաժանվում են երկու մասի։

Առաջին տեսակի բառակապակցություններում գոյականը սովորաբար հանդես է գալիս որպես շարահյուսական ինքնուրույն ֆունկցիա ունեցող բառ,

և այս դեպքում թվականը սոսկ նրա որոշիչն է լինում։ Հետևաբար այս բառակապակցություններն արտահայտում են որոշիչ հարաբերություն՝ բաղադրիչների միջև։ Այս տիպի բառակապակցություններ կազմվում են քանակական, դասական և բաշխական թվականներից և անձ կամ իր ցույց տվող բոլոր գոյականներից։ Այսպես են, օրինակ, առաջին դասը, երկու շենքը, վեցերորդ շարք, ութական աշակերտ և այլն։ Բառակապակցության լրացյալը կարող է կատարել շարահյուսական տարբեր պաշտոններ, և դրանցից թվականի լրացական հարաբերությունը չի փոխվում. այն ցույց է տալիս տվյալ առարկայի թվական հատկանիշը։ Այսպիսի բառակապակցություններ են՝ հինգ երեխա, քսան զինվոր, տասնհինգ գյուղ, երրորդ գունդ, չորսական գիրք և այլն։

Օրինակներ՝

«Յոթն ավանները միասին ունեին տասներեք հազար երեք հարյուր ութ հետևակ և ձիավոր զինվոր» (Ռաֆֆի, Երկեր, 7-րդ հատոր, 1956, էջ 184)։

«Առաջին պարսպի քանդակը այն աստիճան լայնացել էր, որ լեռնականները ներս էին մտել և այժմ սկսել էին փորել երկրորդ պարսպի ստորոտը» (Ռաֆֆի, 7-րդ հատոր, 1956, էջ 306,)։

«Խմբի հետևից եկող ուժեղ ձիերին բարձել էին երկու վարազ» (Դ. Դեմիրճյան, Վարդանանք, 1954, էջ 8)։

«Երկու խոսակիցները միաժամանակ բարձրացրին գլուխները» (Մուրացան, Երկեր, 3-րդ հատոր, 1952, էջ 171)։

Բերված նախադասություններում թվականների լրացյալ գոյականները շարահյուսական զանազան պաշտոններ ունեն (ուղիղ խնդիր, հատկացուցիչ, ենթակա և այլն)։ Ինչով է դրսևորվել քննվող բառակապակցությունների գլխավոր և կախյալ բառերի հարաբերությունը։ Շարահյուսական այդ հարաբերության դրսևորման ձևաբանական միջոց չկա։ Սա վերաբերում է ոչ միայն բառակապակցությունների այս ենթատեսակին, այլև թվական լրացում ունեցող բոլոր բառակապակցություններին։ Բառակապակցությունների բաղադրիչների հարաբերությունն այստեղ արտահայտվում է զուտ շարահյուսական-իմաստային ձևով։ Այս առանձնահատկությունն անհրաժեշտ է ի նկատի ունենալ այլ լեզուներից հայերեն և հակառակ թարգմանությունների ժամանակ, մասնավորապես հայերենից ռուսերեն և ռուսերենից հայերեն մեքենայով կատարվող թարգմանությունների գործում։

Անվանական բառակապակցությունների մեջ առանձնահատուկ տեղ ունեն այն կապակցությունները, որոնցում գլխավոր բառի դերում հանդես են գալիս տարածության, ժամանակի, կշռի, ծավալի, հաշվի և բազմաթիվ այլ չափերի միավոր արտահայտող բառեր։ Նման կապակցություններում համապատասխան միավորն ստանում է թվական որոշիչ, որն արտահայտվում է մեծ մասամբ քանակական թվականով։ Այդպիսի միավոր են՝ միլիմետր, սանտիմետր, մետր, կիլոմետր, հեկտար, քառակուսի մետր, խորանարդ մետր, վայրկյան, րոպե, ժամ, օր, ցերեկ, գիշեր, շաբաթ, ամիս, տարի, դար, գրամ, կիլոգրամ, ցենտներ, փուդ, տոննա, կառ, գլուխ, շունչ, լև, հոգի և բազմաթիվ այլ բառեր, որոնք իմաստային զանազան անցումներով ձեռք են բերել կամ ձեռք են բերում չափի միավորի նշանակություն։

Այսպիսի բառակապակցություններում գոյականը միշտ եզակի է դրվում։ Գոյականի շարահյուսական դերն այս տիպի բառակապակցություններում անխզելի է նրա հետ կապակցված թվական բաղադրիչից։ Իմաստային տեսակետից

այս կապակցությունը այնպիսի միասնություն է, որ չի կարելի մասերի բաժանել։ Այսպես են՝ երեք մետր, հինգ կտոր, երկու բաժակ (չափի իմաստով), վեց օր, քսան ռուբլի, տասը գրամ, ութը հոգի, առաջին պահ, ինն հատ և այլն։ Օրինակներ՝

«Տունը շատ հեռու չէր, բայց որ հասավ, այնպիսի հոգնածություն էր զգում, կարծես տասը վերստ ճանապարհ էր կտրել (Նար-Դոս, Երկեր, հատ. 1, 1955, էջ 155)։

«Նրանք կոլտնտեսության տասնհինգ հազար ռուբլի գումարը ինքնագլուխ բաժանել են իրենց բարեկամներին ու մտերիմներին» (Ս. Խանզադյան, «Հողը», 1957, էջ 439)։

«Մշկահանդը տարեկան վեց հազար ցենտներ հաց կտա մեզ» (Ս. Խանզադյան, «Հողը», 1957, էջ 440)։

«Լվացարանի ջրից մի երկու բուռ շփեց կոշտ, մազակալած երեսին» (Ֆր. Թափալցյան, «Ոսկե հովիտ», 1955, էջ 48)։

«Հարյուր գրամ կոնյակ խմեց» (Ֆր. Թափալցյան, Ն. տ., էջ 48)։

«Մի բոպե իշխանուհու դաժան, թափառող հայացքը կանգ առավ գրասեղանի մոտ հատակի վրա, ուր սե թանաք էր թափված» (Նար-Դոս, 1-ին հ., 1955, էջ 197)։

«Ճիմերի քառակուսի կտորներից երեք-չորս հատ իրար վրա դնելով՝ վերցրեց, բերեց...» (Ֆր. Թափալցյան, «Ոսկի հովիտը», 1955, էջ 373)։

Այսպիսի գոյականների հետ կապակցվում են նաև դասական թվականները ցույց տալով տվյալ չափի միավորի, որպես առարկայի, հերթական կարգը։ Այդ բառակապակցություններն էլ դարձյալ արտահայտում են իմաստային մի ամբողջություն. նրանց բաղադրիչները միասնական են ոչ միայն իմաստային, այլև շարահյուսական տեսակետից։

Պետք է նշել, որ նման կապակցությունների մեջ ավելի հաճախ հանդես է գալիս առաջին դասականը։

Օրինակներ՝

«Վռամը երկրորդ բաժակ ջուրը դատարկելուց հետո, խոսեց իր երկհարկանի վիլլայի մասին» (Ֆր. Թափ., «Ոսկե հովիտ», 1955, էջ 56)։

«Առաջին պահ ոչ մեկը նրանցից բառ անգամ չէր կարողանում ասել» (Գ. Սևունց, «Թեհրան», հ. 1-ին, 1953, էջ 401)։

«...համատարածի առաջին օրվանից վերջին ասեղս բերել եմ կոլխոզ, ինքս էլ մտել եմ, քսաներկու տարի ճակատիցս քրտինք եմ թափել» (Ֆր. Թափ., «Ոսկե հովիտ», 1955, էջ 254)։

«Երրորդ օրը նկատեց, որ չոր կերպով հազում է» (Նար-Դոս, հատ. 3-րդ, 1955, էջ 169)։

Պետք է նշել, որ չափի միավոր արտահայտող գոյականների հետ կապակցվում են նաև բաշխական թվականները, սակայն այսպիսի բառակապակցությունների գործածությունը համեմատաբար սահմանափակ է։ Ավելի հաճախ գործածվում են մեկական ժամ, երեքական բաժակ, չորսական ռուբլի և այլ ձևեր։

Օրինակներ՝

«Դուլրն այս անգամ այնքան բարեհաճ գտնվեց, որ առանց ծեծ ու կռվի մի-մի կտոր հաց ու պանիր էլ շպրտեց նրանց դոգը» (Նար-Դոս, 1-ին 1955, հ. 91)։

«Հինգ-հինգ հոգի իրար դեմ ելած՝ սրամարտ էին մղում» (Դ. Դեմիրճյան, «Վարդանանք», 1952, էջ 14)։

Առանձին տեղ ունեն այն բառակապակցությունները, որոնք կազմվում են թվականով և տեսակ, կարգ գոյականներով, որոնք կարող են տվյալ կապակցություններում հանդես գալ նաև տեսակի, կարգի, շարքի սեռական ձևով։ Տեսակ, կարգ բառերը չափ կամ որոշակի աստիճան չեն նշում, սակայն թվականի հետ միասին ցույց են տալիս հատկանիշ (թեև ոչ ուղղակի, այլ ընդհանուր ձևով)։ Այսպես են՝ երկու տեսակ (երկու տեսակի), հազար տեսակ (հազար տեսակի), երրորդ տեսակի, առաջին կարգի, չորրորդ կարգի և այլն։

Օրինակներ՝

«Նա երկու տեսակ հայացք ունի. մեկը՝ խիստ ու պրպտող, երբ նայում է քեզ շեշտակի, և մյուսը՝ մտածկոտ ու մելամաղձոտ...» (Նար-Դոս, 2-րդ. 1955, էջ 427)։

Թվականի և չափի միավորի իմաստ ունեցող գոյականի բառակապակցությունները լինում են ոչ միայն երկանդամանի, այլև եռանդամանի, երբ չափի միավորն ունենում է նաև այլ բնույթի լրացում։ Այս դեպքում քանակական թվականը լրացական հարաբերության մեջ է գտնվում ոչ միայն չափի միավոր գոյականի, այլև այդ գոյական լրացման ու գոյականի նկատմամբ՝ միասին վերցրած։ Իբրև կանոն, այդպիսի դեպքերում չափի միավորի հետ սերտ կապակցության մեջ են գտնվում ածականները։ Օրինակ, քառակուսի մետր, խորանարդ սանտիմետր, ծովային մղոն, մեծ ամպեր, լիքը բաժակ, փոքր կում և այլն։

Այս ձևով ստացվում են՝ հինգ քառակուսի մետր, երեք լիքը բաժակ, հարյուր ծովային մղոն և այլն։

Օրինակ՝

«Նա մի երկու փոքր կում ջուր ըմպելով, գեղեցիկ, կարմիր շրթունքները, որոնք ասես սնգուրված էին, թաշկինակով սրբելով՝ շարունակեց...» (Ֆր. Թաիալյան, «Ոսկե հովիտ», 1955, էջ 51)։

Թվականով և չափի միավոր գոյականով կազմված բառակապակցությունը կարող է կապակցվել նման այլ բառակապակցության հետ։ Օրինակ՝ քսան ռուբլի երեսուն կոպեկ, հազար վեց հարյուր մետր քսանհինգ սանտիմետր և այլն։ Այստեղ բաղադրիչ բառակապակցությունները կապակցված են հավասարության հարաբերությամբ, լրացական փոխհարաբերությունն այստեղ բացառվում է։

Այսպիսի բառակապակցությունները շարահյուսական տեսակետից միասնություն են կազմում, այսինքն միասին են հանդես գալիս որպես նախադասության մեկ անդամ։ Երբեմն մեջ այդպիսի բառակապակցությունները որևէ կերպով չեն բաժանվում իրարից և դիտվում են որպես շարահյուսական մի ամբողջություն՝ բաղադրյալ բառակապակցություն։

Օրինակ՝

«Այսօրվա կուրսով հարյուր ֆրանկն անում է ճիշտ երեսունհինգ ռուբլի քառասունհինգ կոպեկ» (Նար-Դոս, հ. 3-րդ, 1955, էջ 128)։

Սրանց նման են նաև այն բառակապակցությունները, որոնց չափի միավորը հավասարությամբ կապակցված է ավելի պակաս միավորի հետ։ Այսպես են՝ հինգ մետր ու կես, հարյուր կիլոմետր ու հարյուր մետր, հիսուն տոննա ու կես, վեց ժամ ու կես։ Նման դեպքերում չափի միավորը կես բառի

հետ կապակցվում է ու կամ և շաղկապներով, իսկ ուրիշ միավորների հետ՝ առանց շաղկապի։

Օրինակ՝

«Ծառն ուսին դրած գավազանի պես,
Քայլեր էր անում չորս կանգուն ու կես» (Ղ. Աղայան, Ընտիր երկեր, 1956, էջ 374)։

Թվականի և ժամանակի միավոր գոյականի բառակապակցությունը կարող է ունենալ նաև լրացում, որը նշում է ժամանակի ավելի մեծ հատված, որի մի մասն է հիշյալ կապակցությամբ արտահայտված ժամանակամիջոցը։ Այդ լրացումն արտահայտվում է գոյականով կամ ածականով (ամիսը, տարին, շաբաթը, օրը, օրական, տարեկան և այլն)։

Այսպես կազմվում են՝ ամիսը վեց օր, շաբաթը քսան ժամ, օրական տասնհինգ լոպե և այլն։

Օրինակներ՝

«Եվեթն նրան իր ծանոթ կանայք ու աղջիկները չգանգահարեին, օրական քսան ժամ կարող էր կառչել գրասեղանին» (Ռ. Թաֆ., «Ոսկե հովիտը», 1955, էջ 576)։

Թվականի և չափի միավոր արտահայտող գոյականների կապակցությունն այնքան սերտ է, որ այդ բառակապակցություններն իրրև մի սերտ ամբողջություն են հանդես գալիս նաև շարահյուսական տեսակետից՝ մտնելով նոր կապակցության մեջ մի շարք մակբայների և այլ խոսքի մասերի հետ, ինչպես վերջիններիս ինքնուրույն, այնպես էլ կապական կիրառության դեպքում։ Այսպես, օրինակ, այդ բառակապակցությունները հանդես են գալիս առաջ, հետո, հեռու, շուտ, ուշ և այլ մակբայների լրացման դերում հետևյալ նախադասությունների մեջ։

«Դոկտոր Ազադիի հրապարակային զեկուցումից երեք օր հետո ինստիտուտի դասախոսական կազմի ժողով հրավիրվեց դիրեկտորի լայն, ընդարձակ առանձնասենյակում» (Գ. Սևունց, «Թեհրան», 1-ին հատ., 1953, էջ 36)։

«Պլենումն սկսվելուց հինգ օր առաջ նրան իր մոտ կանչեց առաջին քարտուղարը» (Ս. Խանզադյան, «Հողը», 1955, էջ 678)։

«Ռունից մի երկու քայլ հեռու դրված էին երկու գրապահարան» (Ռ. Թաֆ., «Ոսկե հովիտ», 1955, էջ 6)։

Բերված օրինակներից երևում է, որ առաջ, հետո, հեռու մակբայները ունեն լրացումներ, որոնք արտահայտված են թվականով և չափի միավոր արտահայտող բառերի կապակցություններով։

Սակայն գործածության ավելի լայն շրջանակ ունեն այն բառակապակցությունները, որոնց գլխավոր բառ մակբայ-կապական բառը չունի կապի խնդիր։ Այդ դեպքում թվականի ու չափի միավոր գոյականի բառակապակցությունը մի տեսակ երկակի նշանակություն է ստանում՝ արտահայտելով ոչ միայն տվյալ ժամանակի կամ տեղի (որոնք արտահայտվում են մակբայ-կապական բառով) անցողության կամ չափի, այլև սկզբնակետի հարաբերություն։ Այսպես, օրինակ, երեք օր հետո, վեց կիլոմետր հեռու, հինգ լոպե առաջ և այլ բառակապակցություններում երեք օր, վեց կիլոմետր, հինգ լոպե կապակցությունները նշում են և ժամանակի ու տարածության չափը, այլև մատնանշում են այդ ժամանակի ու տարածության սկզբնակետը։

Օրինակներ՝

«Երեք օր հետո Զեհրաբին Մադինեին տարավ Շիմրան՝ Թեհրանից ոչ այնքան հեռու գտնվող ամառանոցը» (Դ. Սևունց, «Թեհրան», 1-ին հ., 1953, էջ 95)։

«Ինն ամիս առաջ նրան այդտեղից մի խումբ բանվորների հետ վոնդեցին՝ աշխատավարձի իջեցման դեմ բողոքելու համար» (Դ. Սևունց, «Թեհրան», 1-ին հ., էջ 211)։

«Չի իմանում, թե ինչ է կատարվել,— իսկույն անցավ նրա մտքով,— որ իմանա, քսան կիլոմետր հեռու կփախչի» (Ֆր. Թափ., «Ոսկե հովիտ», 1955, էջ 698)։

Այս վերջին հանդամանքն է պատճառը, որ երբեմն հետո, առաջ մակբայ-կապական բառերի մոտ թվականով ու չափի միավոր գոյականով կապակցություն լրացումը ստանում է ոչ թե պարագայական, այլ խնդրային բնույթ, որի հետևանքով և դրվում է բացառական հոլովով։ Այսպիսի կապակցությունները գործածական են ինչպես գրական, այնպես էլ առօրյա խոսակցական լեզվում։

Օրինակներ՝

«Երեք օրից հետո դուրս եկան Ողական ամրոցից երկու եղբոր որդիները» (Ռաֆֆի, Երկեր, 7-րդ հատ., էջ 266)։

«Նրան դեղատանն ասել էին, որ իր պատվերը երկու ժամից հետո պատրաստ կլինի» (Ֆր. Թափալցյան, «Ոսկե հովիտ», 1955, էջ 283)։

Պատահում է, որ երբեմն այսպիսի կապակցության հետո կապը գեղչվում է, և թվականն ու լրացյալ չափի միավոր գոյականն ստանձնում են ամբողջ կապակցության ֆունկցիան, դրանով իսկ դառնալով բայի լրացում։ Այսպես լինում են՝ չորս ժամից (*վերադառնալ*), հինգ ժամից (*վերջանալ*), երկու օրից (*հեռանալ*) և այլն։

Օրինակներ՝

«Հինգ-վեց ամսից նա արդեն այնպես վարժ էր կարդում հայերեն և այնքան լավ էր հասկանում կարդացածը, որ այլևս շատ քիչ բառերի թարգմանության կարիք էր զգում» (Նար-Դոս, 2-րդ հ., 1955, էջ 574)։

«Մի բոպեից ամենքս Կոլյայի սենյակումն էինք» (Նար-Դոս, 2-րդ, 1958, էջ 584)։

Թվականով ու չափի միավոր արտահայտող կամ ինքնուրույն շարահյուսական դեր կատարող գոյականով կազմված բառակապակցությունները երբեմն կարող են լրացական կապի մեջ լինել նաև այլ մակբայների հետ։ Այսպես են, օրինակ, հինգ բոպեից ավելի, երկու տարուց պակաս և այլ կապակցությունները։

Օրինակներ՝

«Դինու գավը, որ տեսանք նրա ձեռքին, բաննցնում էր տասնհինգ տարուց ավելի» (Նար-Դոս, 1-ին հատ., 1952, էջ 59)։

«Ես քսանհինգից երեսուն սանտիմետրից պակաս խոր չեմ վարել...» (Ֆր. Թափալցյան, «Ոսկե հովիտ», 1955, էջ 265)։

Երբեմն էլ այդպիսի բառակապակցություններում գոյականը գեղչվում է, որովհետև տվյալ նախադասության մեջ այն հանդես է գալիս որպես լրացյալ։ Այդ դեպքում թվականը միայնակ ստանձնում է նաև իր լրացյալի ֆունկցիան և գոյականաբար գործածվելով ստանում է նրա քերականական հատկանիշը,

այն է՝ հոլովվում է։ Այս ձևով ստացվում են՝ հինգից ավելի, վեցից պակաս, հարյուրից անց և այլ բառակապակցություններ։

Օրինակներ՝

«Այժմ նա հինգ հարյուրից ավելի զինվոր ուներ, որոնք կարող էին կռվել բաց դաշտի վրա» (Մուրացան, 3-րդ հատ., էջ 332 և 195)։

Քննարկվող բառակապակցությունները կարող են նաև հանդես գալ իսկական և անիսկական կապերի խնդիրների դերում։ Այդպիսի կապակցություններ կան հետևյալ նախադասություններում.

«Բացի տասը հազար ռուբլուց նրա գրպաններում հայտնաբերեցին ուրիշի անվամբ մի կեղծ անձնագիր» (Ս. Խանզադյան, «Հողը», 1955, էջ 731)։

«Ինչ եք կարծում, երկու ֆունտի չափ արդեն պակասել էր ծանրությունս, մի ֆունտ ձեր լրագրի հաշվին երևի, մյուսը՝ ձեր հակառակորդի» (Նար-Դոս, 3-րդ հատ., էջ 75)։

«Մենք վոտամին հինգ մատի պես գիտենք» (Գր. Թափ., «Ոսկե հովիտ», էջ 253)։

«Ով էլ լիներ, ինչ գործով էլ գար, մի օրվա ժամանակ պապս նրան պահում էր երկու, երեք օր» (Ա. Բակունց, Երկեր, 1955, էջ 123)։

Հաճախ թվականի ու գոյականի բառակապակցությունը դառնում է մի շարք կապական բառերի խնդիր։ Այդպիսի կապակցություններում թվականի լրացյալի դերում հանդես են գալիս մեծ մասամբ չափի միավորի իմաստ ունեցող գոյականները (երեք տարվա ընթացքում, վեց շաբաթվա մեջ, երկրորդ ժամից հետո)։

Օրինակներ՝

«Սակայն գրախանութում նրան ասացին, թե վերջին երեք ամսվա ընթացքում նրա երկու գրքույկից մեկն ամենևին չի ծախվել, իսկ մյուսից ծախվել է հինգ օրինակ միայն...» (Նար-Դոս, 1-ին հատ., 1955, էջ 179)։

«Նրան թվում էր, թե այդ ուրախ և անհոգ մարդն այդ մի ամսվա մեջ մի քանի տարով ծերացել է» (Նար-Դոս, 2-րդ հ., 1955, էջ 391)։

Պետք է նշել, որ թվականը սերտ կապակցության մեջ է մտնում ոչ միայն չափի միավոր արտահայտող, այլև բազմաթիվ այլ գոյականների հետ, որոնք մի շարք դեպքերում թվականից կարող են անջատ գործածվել և կատարել շարահյուսական ինքնուրույն պաշտոն, սակայն թվական լրացում ունենալու դեպքում չեն դիտակցվում որպես անկախ անդամ։ Այս դեպքում արդեն գոյականի և թվականի կապակցությունն այնքան է սերտ լինում, որ դրանց բաժանումն անհնարին է՝ առանց իմաստի խախտման։ Կապակցության երկու բաղադրիչները այլևս նախադասության մեջ չեն կարող դիտվել որպես ինքնուրույն անդամ, այլ միասին դառնում են նախադասության մեկ անդամ։ Այդ գոյականների մի մասը նման կապակցությունների մեջ է մտնում նաև ուրիշ խոսքի մասերի հետ, ինչպես դերանվան, ածականի և այլն (այս դեպքում, նման դեպքում և այլն)։ Սակայն, որոշ գոյականներ էլ միայն թվականի հետ են այդպիսի բառակապակցություն կազմում։ Այսպես, օրինակ, առաջին դեպքում, առաջին հայացքից, երկու նվազ, առաջին նվազ, առաջին հերթին, մի կողմից, երկու կողմից և այլն։

«Առաջին հայացքից Արևելքի այդ մեծ քաղաքում ոչինչ չի փոխվել» (Գ. Սևունց, «Թեհրան», 1-ին հատ., 1953, էջ 6)։

«Առաջին հերթին շուկա հանեց փոքրիկ կապերտը» (Դ. Սևունց, Ն. տ. էջ 211)։

«Երեք կողմից Կամենագրյուրի խոտհարքները շրջապատված են սարերով, իսկ մի կողմից բաց հորիզոն է» (Ս. Ասանդադյան, «Հողը», 1955, էջ 668)։

Թվականի և այլ խոսքի մասերի բառակապակցություններ.— Թվականը լրացական հարաբերությամբ կապակցության մեջ է մտնում նաև այլ խոսքի մասերի հետ։ Դրանց մեջ հատուկ տեղ ունեն անգամ, անգամից, տարեկան, ամսական, օրական և այլ բառերի հետ թվականի կապակցությունները։

Անգամ բառը (որը կարող է հանդես գալ նաև անգամից, անգամվա, անգամով հոլովված ձևերով) ծագմամբ մակբայ է, սակայն ժամանակակից գրական հայերենում այն վերածվել է եղանակավորող բառի։ Ինչպես մյուս խոսքի մասերի, այնպես էլ թվականների հետ կապակցվելով է, որ անգամ բառը շարահյուսական ֆունկցիա է կատարում, իսկ առանձին միայն եղանակավորող բառ է (այլ իմաստով)։ Թվականները, կապակցվելով անգամ բառի հետ, կարող են տարբեր հարաբերություններ արտահայտել։ Այսպես, քանակական թվականները կապակցվելով անգամ բառի հետ, ցույց են տալիս գործողության կատարման չափը (մեծ մասամբ)։ Իսկ դասական թվականների և անգամ բառի կապակցությունը ժամանակային հարաբերություն է արտահայտում։ Բառակապակցությունների այս տեսակը շատ գործուն է արդի գրական լեզվում։

Օրինակներ՝

«Վաղուցին երկու անգամ խուլ հազաց կոկորդում» (Դ. Ս., «Թեհրան», 1953, էջ 37)։

Անգամ բառը հանդես է գալիս նաև անգամից, անգամով և այլ ձևով։

Օրինակ՝

«Կարելի բա՞ն է առաջին անգամ տեսնել աղջիկը և հենց առաջին անգամից էլ նշան տալ» (Նար-Դոս, 2-րդ հատ., 1955, էջ 418)։ Այս բառակապակցությունն այնքան սերտ ամբողջություն է, որ վերածվել է բարդ բառի՝ միանգամից։ Այդ բառակապակցությունները հաճախ ունենում են ժամանակ ցույց տվող որևէ գոյական բաղադրիչ, դրանով էլ վերածվելով երեք բառանի կապակցության։ Ժամանակ ցույց տվող այդ բառը մատնանշում է պարագայական չափի սահմանները, արտահայտելով սահմանափակող հարաբերություն հիշյալ բառակապակցության նկատմամբ։

Օրինակներ՝

«Աղջիկը բավական տգեղ արարած էր, հոր պես դեղնավուն և, ըստ երևույթին, հիվանդոտ. բժիշկը շաբաթը երկու անգամ կանոնավորապես այցելում էր նրան» (Նար-Դոս, 1-ին հատ., 1955, էջ 226)։

«Օրը երկու-երեք անգամ կարճ, բայց սաստիկ անձրև էր գալիս» (Ս. Ասանդ., «Հողը», 1955, էջ 617)։

Երբեմն ժամանակ ցույց տվող բառն արտահայտվում է ածականով։

Օրինակ՝

«Սաթո մայրիկը օրական երկու անգամ գալիս կթում էր, կաթը հանձնում ֆերմայի վարիչին և գնում տուն» (Գր. Թաք., «Ոսկե հովիտ», 1955, էջ 206)։

Երբեմն էլ անգամ բառի և նրա հետ կապակցվող թվականի մոտ ժամանակն արտահայտվում է թվականի և չափի միավոր արտահայտող բառի կապակցությամբ։

Օրինակ՝

«Օրամեջ, կամ երկու օրը մեկ անգամ վերցնում էր հավերի ածած ձուն և գնում թաղի մանրավաճառի մոտ» (Նար-Դոս, 1-ին հատ., 1955, էջ 77)։

Ավելի հաճախ են գործածվում դասական թվականի և անգամ բառի կապակցությունները։

Օրինակներ՝

«Բայց ահա լսվեց Հոկտեմբերի ահազանգը Պետրոգրադից, և Դավիթ Ֆոմիչն առաջին անգամ բնազդական սարսուռ զգաց ահարկու գալիքի հանդեպ» (Նար-Դոս, 1-ին հ., 1955, էջ 238)։

Երբեմն պատահում է, որ անգամ բառը նման բառակապակցություններում զեղչվում է, և թվականը միայնակ կատարում է բառակապակցության դեր։ Օրինակ՝ հազար չափիր, մեկ՝ կտրիր, հասկացողին մեկ ասա, չհասկացողին՝ հազար ու մեկ։ Սրանք պատահում են առածներում և ասացվածքներում, որտեղից էլ անցնում են գեղարվեստական երկերի մեջ։

Օրինակ՝

«—Դե որ չես սիրել, չես հասկանա—հազար նկարագրեմ» (Ն.-Դ., 2-րդ հատ., էջ 420)։

Հատուկ տեսակի բառակապակցություններ են կազմվում թվականներով և տասնյակ, զույգ հավաքական թիվ արտահայտող բառերով, որոնցից առաջինը գոյական է, իսկ երկրորդը՝ ածական։ Այսպես են՝ երեք զույգ, հինգ տասնյակ, վեցական զույգ և այլն։ Օրինակներ՝

«Պատերից յուրաքանչյուրը բաժանվում էր չորս կամարամասի, հնգական զույգ որմնասյուներով, որոնք հաստատված էին գոտեզարդ պատվանդանների վրա» (Մուրաց., 3-րդ հատ., 1952, էջ 10)։

«...Նրանց հետևում էին մոտ երկու տասնյակ հեծյալ ժանդարմներ և Սարդար խանի մարդիկ» (Գ. Սևունց, «Թեհրան», 1-ին հ., 1953, էջ 308)։

Անակական թվականները լրացական հարաբերությամբ բառակապակցության մեջ են մտնում—անի ածանցով կազմված ածականների հետ (հարկանի, գլխանի, աչքանի, ոտանի և այլն)։ Այսպես, լինում են՝ հինգ հարկանի, երեք գլխանի, վեց աչքանի, մի ոտանի և այլն։ Ածականն այստեղ ցույց է տալիս որևէ բան ունենալու հատկանիշ, իսկ թվականը նրա վրա դրվելով սահմանափակում է այդ հատկանիշը։ Օրինակ՝

«Ով եկել է մեզ մոտ, մեկ երկու տարի մնացել է, կոլխոզի հաշվին մի լավ հարստացել է, իր համար երկու հարկանի բնակարան է շինել Երևանում, վերջն էլ մերկացվել, շպրտվել է դուրս» (Քր. Թափ., «Ոսկե հովիտ», 1955, էջ 430)։

Ավելի հաճախ են գործածվում թվականի և օրական, ամսական, տարեկան և նման ածականների կապակցությունները։ Այդպիսի բառակապակցություններում թվականը նշում է ժամանակային հատկանիշի թվական չափը, այլ կերպ ասած՝ դրսևորում է այդ հատկանիշի սահմանափակությունը ժամանակի շրջանում։ Թվականը և ածականը տվյալ կապակցության մեջ սերտ միասնության մեջ են։ Իբրև նախադասության անդամ էլ նրանք միասին են մի պաշտոն կատարում։ Օրինակներ՝

«Հինգ տարեկան երեխա էր, որ հայրն ու մայրը մեռան, վերցրի պահեցի, ուսումի տվեցի» (Նար-Դոս, 3-րդ հ., 1955, էջ 12)։

«Հարևան խարխուլ տան կտրան ծայրին, նորաբուլս առատ կանաչի մեջ կանգնած էր հազիվ մի ամսական սպիտակ մի գառ...» (Նար-Դոս, 3-րդ հ., 1955, էջ 8)։

Առանձին խումբ են կազմում այն բառակապակցությունները, որոնք կազմված են թվականից և մի շարք անիսկական կապերից։ Այդ կապակցություններում թվականն ստանում է գոյականի քերականական ձև և հոլովված է հանդես գալիս, սակայն իմաստով այն թիվ է արտահայտում։ Թվականը կապակցվում է չափ, մոտ և այլ բառերի հետ, և բառակապակցությունն արտահայտում է մոտավոր թվական չափ։ Այսպես են՝ քսանի չափ, վաթսունին մոտ և այլն։ Օրինակներ՝

«Նա յուր հետ ուներ ընդամենը հինգ հարյուրի չափ զորք» (Մուրացան, 3 հ., 1952, էջ 453)։

«Ռա վաթսունին մոտ, առույգ, պնդակորով մի տղամարդ էր, կյանքում երբեք չէր հիվանդացել և ամեն օր պարապում էր մարմնամարզությամբ» (Ֆր. Թաի., «Ոսկե հովիտ», 1955, էջ 115)։

Հայերենում թվականը սովորաբար կապակցության մեջ չի մտնում բայի հետ։

Սակայն երբեմն դասական թվականները, մասնավորապես առաջին դասականը առաջինը ձևով պարագայական լրացման դերում կապակցվում է բայի հետ։ Օրինակ՝

«Առաջինը այգի մտավ Կարինենն» (Ֆր. Թաիալցյան, «Ոսկի հովիտ», 1955, էջ 99)։

Բառակապակցություններ, որտեղ թվականը լրացյալի դերում է.— ժամանակակից գրական հայերենում բավական տարածված են այլ խոսքի մասերով և թվականով կազմված բառակապակցությունները, որոնք մի շարք տեսակների են բաժանվում ինչպես բաղադրիչների փոխհարաբերության, այնպես էլ իրենց արտահայտած իմաստների տեսակետից։ Առաջին հերթին պետք է նշել քանի, մի քանի դերանունների և թվականի կապակցությունը, որն արտահայտում է մոտավոր, ոչ որոշակի թվի հասկացություն։ Այս ձևով ունենում ենք մի քանի հարյուր, քանի՞ հարյուր, մի քանի հազար, մի քանի միլիոն։ Մի քանի դերանունը (որն իր ծագմամբ մի թվականի և քանի դերանվան կապակցություն է) կարող է կապակցվել նաև հավաքական թվականի իմաստ ունեցող տասնյակ բառի հետ (մի քանի տասնյակ)։

Սակայն պետք է նշել, որ քանի, մի քանի դերանունները ոչ բոլոր թվականների հետ կարող են կապակցվել։ Այդ բառերի հետ կապակցության մեջ մտնում են մեծ համրանք արտահայտող թվականները միայն (հարյուր, հազար, միլիոն, միլիարդ և այլն)։ Այսպես, նման բառակապակցություններ կան հետևյալ նախադասություններում.

«Նրա համար ինչ նշանակություն ունի, եթե մեր կոլխոզում մի քանի հարյուր հեկտար կմնա առանց հերկելու ու ցանելու» (Ս. Խանզադյան, «Հողը», 1955, էջ 605)։

«Հայկ, քանի հազար անգամ ասել եմ, որ քեզ հասկացող, գնահատող չկա, չկա, չկա» (Ֆր. Թաիալցյան, «Ոսկե հովիտ», 1955, էջ 773)։

Քանակական թվականների հետ սերտ բառակապակցություն է կազմում հավաքական թվականի իմաստ արտահայտող տասնյակ բառը։ Այդպիսի բառակապակցությունները մոտավոր անորոշ մեծ թվի հասկացություն են արտահայտում։ Տասնյակ բառի հետ նույնպես կապակցվում են հազար, միլիոն, միլիարդ և այլ խոշոր թվականներ (տասնյակ հազար, տասնյակ միլիոն և այլն)։

Այս բառակապակցությունների լրացյալ թվականը կարող է ածականակերտ ածանց էլ ստանալ, սակայն դարձյալ թվական հասկացություն կարտահայտի։ Օրինակ, տասնյակ հազարավոր, տասնյակ միլիոնավոր և այլն։

Թվականի հետ կապակցություն են կազմում նաև մի շարք ածականներ, դերանուններ, մակբայներ և եղանակավորող բառեր։ Դրանցում թվականը կարող է հանդես գալ կամ ինքնուրույն շարահյուսական պաշտոն կատարող, կամ թե այլ ֆունկցիա կատարող բառերի հետ կապակցված։ Որոշ դեպքերում թվականը կարող է գոյականաբար առնված լինել կամ չլինել։ Սակայն բոլոր դեպքերում էլ այն դիտվում է իբրև տվյալ բառակապակցության գլխավոր բառ, լրացյալ, որի լրացուն են այդ բառակապակցության մեջ մտնող ածականը, դերանունը կամ մակբայը։

Իմաստային տեսակետից այդ բառակապակցությունները միասնական են, բաղադրիչները զատել հնարավոր չէ։

Այսպես են՝ հազիվ երեսուն տարեկան, ուղիղ ժամը վեցին, միայն երկու օր հետո, ընդամենը երեք հատ, առնվազն հինգ ցենտներ, գրեթե վեց ժամ, մոտ քառասուն տարի, ամբողջ երեք օր, հիշտ քսան կտոր և այլն։ Օրինակներ՝

«Ուղիղ ժամը տասին ընդարձակ այդ համարը մտավ միջահասակից քիչ բարձր, վայելչակազմ, գեղեցկադեմ, հազիվ քսանհինը տարեկան մի զինվորական՝ գնդապետի ուսադիրներով» (Գ. Սևունց, «Թեհրան», 1-ին հ., 1953, էջ 62)։

«Արջանց Ասլանը Հասրաթյանին այցելեց գյուղ գնալուց միայն երկու օր հետո» (Ս. Խանզադյան, «Հողը», 1957, էջ 374)։

«Մենք քիչ ենք, ընդամենը երեսուն հոգի» (Ս. Խանզ., ն. տ. էջ 449)։

«Բերքը առնվազն մեկ ցենտներով ավելի պետք է լինի» (Ս. Խ., ն. տ, էջ 543)։

«Ամբողջ չորս տարի վշտի և հուսահատության մեջ սպասելը շատ շտապել է նշանակում» (Նար-Դոս, 1-ին հատ., 1955, էջ 214)։

Ինչպես տեսնում ենք, բերված բառակապակցություններում ածականը, դերանունը, մակբայը կամ ճշգրտում են թվականի ցույց տված չափը (ուղիղ, ընդամենը, ամբողջ, միայն) կամ մոտավոր չափ են ցույց տալիս (հազիվ, գրեթե, մոտ)։

Սակայն մոտավոր թվի հասկացությունն արտահայտվում է նաև մի քանակական թվականի կապակցությամբ, ուրիշ քանակական թվականների հետ։ Այսպես, օրինակ, մի երկու, մի տասնհինգ (հոգի), մի հարյուր (մարդ)։

«Մի տասը բոպե անց նրանք արդեն նստել էին սեղանի մոտ» (Ս. Խանզադյան, «Հողը», 1957, 740)։

«Մի երկուսի նժույգները խրխնջում էին կատաղությունից» (Դ. Դեմիրճյան, «Վարդանանք», 1954, էջ 14)։

Մոտավոր թվի հասկացություն են արտահայտում նաև այն բառակապակցությունները, որոնք կազմված են չափի տեսակետից իրարից ոչ հեռու ընկած երկու թվականներից։ Այդպիսի կապակցության մեջ լրացական փոխհարաբերություն չկա՝ շարահյուսական տեսակետից։ Այսպիսի կապակցություն են երկու-երեք, չորս-հինգ, հինգ-վեց, հինգ-տասը, քսան-քսանհինգ։ Կապակցության այս տեսակի համար սահմանափակում չկա, բոլոր թվականներն էլ կարող են այս ձևով կապակցվել, սակայն այն պայմանով, որ առաջին բաղադրիչը երկրորդից փոքր թիվ արտահայտի։ Օրինակներ՝

«Նրա ստացած միակ շոշափելի օգուտն այն էր, որ այդ ժամանակամիջոցում տասը-տասանհինգ ձու էր ետ գցել թուխս նստեցնելու համար» (Նար-Դոս, 1 հ., էջ 83)։

«Մենակ ես չէի, շատերն էն ժամանակ երկու-երեք կով ունեին, տասնհինգ-քսան ոչխար» (Ս. Մանդաղյան, «Հողը», 1957, էջ 432)։

Պատահում է, սակայն, որ այսպիսի բառակապակցություններից առաջ, որոնք արդեն իսկ մոտավոր թիվ են արտահայտում, դրվում է մի թվականը՝ դարձյալ մոտավոր իմաստով (անորոշության երանգով)։ Այսպես, մի հինգ-տասը, մի քսան-երեսուն և այլն։ Օրինակ՝

«...Իսկ փեսացուի կողմից հրավիրված էին նրա մի երկու ազգական կանայք և մի քանի պաշտոնակիցներ, այնպես որ բոլորս միասին առած՝ հազիվ մի տաս-քսան հոգի լինեինք» (Նար-Դոս, 2-րդ հ., 1955, էջ 455)։

Երկու թվականի կապակցությունը կարող է արտահայտել նաև այլ իմաստ։ Այսպես, նույն թվականների կրկնավոր կապակցությամբ արտահայտվում է բաշխական հարաբերության իմաստ։ Հայերենում բաշխական թվականները կազմվում են ոչ միայն -ական ածանցով՝ քանակական թվականներից, այլև քանակական թվականների կրկնավոր կապակցությամբ։ Բաշխական հարաբերության իմաստի արտահայտման այս միջոցը հատուկ է ավելի շատ բարբառներին և խոսակցական լեզվին, որտեղից էլ այն թափանցում է գրական հայերենի մեջ։ Օրինակ՝

«Հինգ-հինգ հոգի իրար դեմ նլած՝ սրամարտ էին մղում» (Դ. Դ., «Վարդանանք», 1954, էջ 14)։

Թվականների կրկնավոր բառակապակցությունները կարող են արտահայտել նաև ուրիշ իմաստ։ Դրանք ստանում են պարագայական իմաստ և սովորաբար դիտվում որպես մակբայական կապակցություններ, ինչպես, օրինակ, մեկ-մեկ, երկու-երկու, հինգ-հինգ, վեց-վեց և այլն։ Օրինակներ՝

«Տատս հանկարծ սթափվում էր, աչքերը տրորում, մոտեցնում բրնձով լի ամանը, և մատով մեկ-մեկ ընտրում բրինձը» (Ա. Բակունց, Երկեր, էջ 134)։

Իմաստային տեսակետից հետաքրքրություն է ներկայացնում հազար թվականի կրկնությունը։ Հազար-հազար կապակցությունը նշանակում է ոչ թե առանձին երկու հազար, այլ շատ հազարներ։ Այստեղ կրկնությունը բառակապակցությունը վերածում է մեկ բարդ բառի։ Օրինակ՝

«Ու պիտի գա հանուր կյանքի արշալույսը վառ հագած, հազա՛ր-հազա՛ր լուսապայծառ հոգինելով ճառագած...» (Հ. Թումանյան, ընտիր երկեր, 1953, էջ 50)։

Դասական թվականը որևէ ժամանակի միավորի գոյականի հետ կապակցության մեջ մտնելիս կարող է ուննալ գոյականով կամ դերբայով արտահայտված լրացում, որն ավելի շուտ վերաբերում է ամբողջ բառակապակցու-

թյանը։ Այս տիպի կապակցությունները սակավադեպ գործածություն ունեն։ Օրինակներ՝

«Միայն Երևան գալու վեցերորդ օրը Հասրաթյանին ու Թագուհուն հաջողվեց տեսնել մինիստր քեռուն» (Ս. Խանզադյան, «Հողը»)։

«Վերադարձի երկրորդ օրն ևեթ նրան խորհուրդ տվողներ եղան ամուսնանալու» (Ա. Բակունց, Երկեր, 1955, էջ 494)։

Առանձին տեսակ են ժամանակ ցույց տվող այն բառակապակցությունները, որոնք կազմված են ժամանակի որևէ հատվածի անվանում գոյականից և նրա լրացյալ թվականից, որը սակայն նման կապակցություններում ունի գոյականի քերականական ձև, օրինակ, մայիսի վեցը, օգոստոսի տասնհինգին, ժամի ութը և այլն։ Հիշյալ կապակցություններում քանակական թվականն ըստ էության կատարում է դասական թվականի և նրա լրացյալ ժամանակի միավորի կապակցության դեր։ Այսպես, ամսի քսանը նշանակում է ամսի քսաներորդ օրը։

Սակայն, երբեմն էլ թվականի լրացյալ ժամանակի անվանումը (տվյալ դեպքում ժամ բառը) սեռականի փոխարեն դրվում է ուղղական հոլովով։ Օրինակ, ասում ենք՝ ժամը տասին (փոխանակ՝ ժամի տասին)։ Այս ձևն այժմ ավելի շատ է տարածված։ Օրինակ՝

«Ուրբաթ օրը, ցերեկվա ժամը երեքին, Ռաշիդը պատրաստվում էր տնից դուրս գալ» (Դ. Սևունց, «Թեհրան», 1-ին հ., էջ 480)։

Երբեմն թվականը գոյականաբար գործածվելով կապակցության մեջ է մտնում մի այլ գո՛յականի կամ հոլովվող խոսքի մասի հետ՝ սահմանափակիչ հարաբերությամբ։ Լրացական հարաբերությամբ թվականի հետ կապակցվող բառը դրվում է բացառական (երբեմն էլ սեռական) հոլովով՝ ցույց տալով այն ամբողջությունը, որի մասն է արտահայտում տվյալ թվականը։ Այսպես են՝ ձեռքերից մեկը, սենյակներից մեկը, նրանցից մեկը, ներկաներից հինգը և այլ կապակցություններ։ Այս կապակցություններն ունեն այն առանձնահատկությունը, որ բառակապակցության բաղադրիչները հեշտությամբ կարող են իրենց տեղը փոխել՝ փոխհարաբերությամբ հանդերձ։ Օրինակ, ձեռքերից մեկը կամ մեկ ձեռքը։ Օրինակներ՝

«Զինվորներից մեկը իջավ նժույգից և քարը վերցնելով՝ սկսեց ամուր թակել դարբասը» (Դ. Դեմիրճյան, «Վարդանանք», 1954, էջ 18)։

«Կատակասերի մեկը պատասխանեց նրան» (Դ. Սևունց, «Թեհրան», 1-ին հ., 1953, էջ 15)։

«Նորեկ աղջիկներից երկուսը հրաժարվեցին» (Դ. Սևունց, Ն. տ., էջ 88)։

Ընդհանրապես թվականը գոյականաբար գործածվելիս քիչ դեպքերում է ստանում գոյականին հատուկ լրացումներ։ Սակայն կան դեպքեր, երբ թվականն այդ դերում ստանում է որոշիչ լրացումներ, որոնց հետ կազմում է բառակապակցություն։ Օրինակ՝

«Կամուրջն ու ներքին տախտակամածը փշրվեցան, վերին հարկը մյուս երկուսից բաժանվելով կործանվեցավ, իսկ վերջիններին շրջապատեց մի սոսկալի հրդեհ...» (Մուրացան, 3-րդ հ., 1952, էջ 278)։

«Զրույցի ժամանակ Աղադին հանկարծ հարցրեց.

—Ինչ ես կարծում, ձեր այդ երեքի արածի մասին ուսանողներից ոչ ոք չգիտեր» (Դ. Սևունց, «Թեհրան», 1-ին հատ., 1953, էջ 495)։